

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԽՆԿՈ ԱՊՈՐ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Մեր կենաց առաջնորդն ու խաղաղության պագնիչն Ինքը Իր երկրավոր կյանքի և քարոզչության ողջ ընթացքին ավանդեց ամենքին՝ լինել մանկան նման, որպեսզի իրենց տեղն ունենան Երկնավոր Հոր մոտ, և երբեք չէր մոռանում հիշեցնել, որ ով որևէ մանկան է ընդունում, ընդունում է նաև Իրեն: Այդ սերն է իշխում Ավետարանում, այդ սիրո հետևորդներն են առ այսօր բոլոր ճշմարիտ հավատացյալները և բարի հետևորդները Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի:

Այդ նույն սերն էր նաև այս անգամ դեպի Խնկո Ապոր անվան մանկական գրադարան տարել Ամենայն Հայոց Հայրապետին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Առաջինին: Վեհափառ Հորն ուղեկցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը, «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը, Հոգեշնորհ Տ. Միքայել ծայրագույն վարդապետ Աջապահյանը, Քրիստոնեական դաստիարակության ու քարոզչության կենտրոնի տնօրեն Հոգեշնորհ Տ. Վազգեն աբեղա Միրզախանյանը և Հոգեշնորհ Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը:

Ընթերցող փոքրիկներն իրենց սերն առ Նորին Սրբությունը արտահայտեցին ծաղիկներով պատելով Վեհափառի ողջ անցնելիք, թեև կարճ, բայց այնքան ցանկալի ու երկար սպասված ճանապարհը: Ծքամուտքի առջև թանկագին հյուրերին դիմավորեցին բոլոր ներկաները՝ աշխատակիցները, ընթերցողները, ծնողները: Բարի գալստյան խոսք ասաց տնօրեն Հայկանուշ Դանիելյանը:

Այնուհետև ամենքը մեկտեղ ներս մտան, որ առաջին անգամ գրադարան եկած հյուրերին դիմավորեց հեքիաթի փերին՝ իր փոքրիկ ունկնդիրներով: Հեքիաթի սրահում ասես մի պահ Վեհափառն ինքն էլ մանկացավ, մոռացավ ժամանակ ու տարիք և նստեց նույն փոքրիկների նման, հենց նրանց կողքին և կատակներով համեմված զրույցով փորձեց մի պահ, միմյանց խառնելով թիվ ու ժամանակ, կրկին երկտեղել դրանք, որպեսզի արդյունքում մնա դարձյալ մանուկը և սերը դեպի նա, որպեսզի ոչ մի ժամանակ և ոչ ոք չմոռանա Տիրոջ գերագույն պատգամներից մեկը՝ գուցե հենց գերագույնը:

Հեքիաթի սրահից դուրս գալով՝ հյուրերը մեկ առ մեկ եղան մյուս սրահներում, մոտիկից ծանոթացան համակարգչային և երաժշտական սրահներին, ընթերցասրահին, որից հետո դահլիճում նրանց դիմավորեցին ման-

կական շուրթերից հնչող երգն ու արտասանությունը, «Տէր ողորմեա»-ի հոգեզմայլ հնչյունները:

Մոտավորապես մեկ և ավելի ժամ տևած հանդիպումն ավարտվեց հրաժեշտի երկուստեք ասված անմոռանալի խոսքերով: Այնուհանդերձ, գոնե մանուկների համար այդ հանդիպումը ոչ միայն եզակի էր իր բնույթով, այլև շատ դաստիարակիչ, քանզի Վեհափառ Հայրն իր կենսափորձի և պարտականության վեհ բարձունքի ատոհճաններից ժամանակավորապես վայր իջնելով՝ մեկ անգամ ևս շրջապատողներին հավաստիացրեց, որ ամեն ոք էլ մի քիչ մանուկ է ցանկացած տարիքում: Եվ մանկանը է՛լ ավելի լավ ճանաչելու, նրա մտերիմն ու բարեկամը դառնալու համար պետք է իջնես մինչև նա և հետո միայն նրա հետ մեկտեղ վեր բարձրանաս հոգու և սիրո անմեկնելի ատոհճաններով:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ